Վիկտորինայի կանոնները

Վիկտորինան «Կլիմայի փոփոխություններ» թեմայով ուսուցողական խաղ է, որը բաղկացած է 100 հարցից: Այն օգնում է առավել արդյունավետ յուրացնել «Կլիմայական արկղիկ» ձեռնարկի բովանդակությունը և խորացնել գիտելիքները կլիմայի փոփոխության վերաբերյալ:

Հարցերը հիմնված են ձեռնարկի երեք հիմնական բաժինների վրա.

1. **Կլիմայի փոփոխության հիմնախնդիրը**
2. **Ինչպես է կլիմայի փոփոխությունն ազդում բնության և մարդու վրա**
3. **Ինչպես կանխարգելել կլիմայական վտանգավոր փոփոխությունները**

Յուրաքանչյուր հարց ունի պատասխանների չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանները ներկայացված են **«Պատասխաններ»** քարտում: